ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 24.01.2024թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2024 թվականի հունվարի 24-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ
Ա. Կոտոյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էին՝

Է. Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյյան

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյյան

3. Բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոյյան

4. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

5. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյյան

6. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 4-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

7. Չափման միջոցների ստուգաչափման սակագների, ստուգաչափման պարբերականության, ստուգաչափման գործընթացին վերաբերող հարցերի քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոյան

8. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Օրակարգային հարցերի քննարկում.

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի հունվարի 24-ի առաջին հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Օրակարգի հարց՝ հավանություն տալ Տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվությանը:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը տեղեկացրեց, որ Տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվության մեջ նեռառված են Խորհրդի նիստի օրակարգի 4–րդ, 5–րդ և 6–րդ հարցերը, ուստի առաջարկեց հաշվետվության զեկույցը լսելուց հետո առանձին չանրադառնալ այդ հարցերին: Տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվությունը առաջին անգամ ամբողջությամբ սահիկաշարի միջոցով ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավարը, որից հետո Արմեն Կոտոյանը պատասխանեց Խորհրդի անդամների հարցերին: Հարցեր հնչեցրեցին Խորհրդի անդամներ Կարեն Սահակյանը և Կարեն Չիլինգարյանը, ինչին հաջորդեց Արմեն Կոտոյանի պատասխանները: Տեսչական մարմնի կարևոր խնդիրներից մեկի վերաբաերյալ հարց հնչեցրեց Խորհրդի նախագահ Վահան Քերոբյանը, հետաքրքրվելով թե ինչ առաջընթաց կա թվայնացման գործընթացում: Հարցին ի պատասխան Արմեն Կոտոյանը հայտնեց, որ թվայնացման հարցի լուծումը գտնվում է

Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի տիրույթում: Ինչին ի պատասխան՝ Արմեն Դանիելյանը հայտնեց, որ թվայնացման մեթոդոլոգիան նախորդ տարվա սեպտեմբեր ամսին ներկայացվել է թվայնացման խորհուրդ և այնտեղից տեղեկացրել են, որ առաջիկա նիստում կքննարկվի, այսինքն օրենքը և մեթոդաբանության որոշումը սեպտեմբերից կառավարությունում է, որը պետք է խորհրդով անցնի, որից հետո ներկայացվի կոմիտե: Վահան Քերոբյանը առաջարկեց Արմեն Դանիելյանին թվայնացման գործընթացի հետ կապված նյութերը ուղարկել իրեն, որ արագացնի հարցի քննարկումը առաջիկա նիստում: Թվայնացման գործընթացի հետ կապված ծավալվեց բավականին լայն քննարկում, փոխանակվեցին կարծիքներ, որի արդյունքում Վահան Քերոբյանը թվայնացումը համարեց տարվա գլխավոր գործ, որի արդյունքում պետք է ներդնել այնպիսի գործիքակազմ, ինչի արդյունքում հնարավոր կլինի լավացնել մարդկանց կյանքը: Քնարկման ընթացքում Կարեն Սահակյանը հայտնեց, որ բենզինի Շել ապրանքանիշի Հայաստան գալով կյանքը փոխվել է, մեքենաների շարժիչները սկսել են շատ լավ աշխատել, ինչին հակադարձեց Վահան Քերոբյանը և ասաց, որ մնացած լցակայաններում ևս որակապես լավ բենզին է վաճառվում: Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալը հայտնեց, որ 2023 թվականի ընթացքում վերցվել է 166 բենզինի նմուշ, որի փորձաքննության արդյունքում ընդամենը 3 տեղ է հայտնաբերվել բենզինի որակի անհամապատասխանություն, ինչը նշանակում է որ բենզինի ոլորտում ռիսկի գործոնը համարյա բացակայում է: Նա հայտնեց նաև, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Սի փի էս էներջի» ՍՊԸ-ի կողմից մոտավորապես 3 ամիս է Հայաստան է ներկրվում Եվրոպական բենզին, սակայն Վահան Քերոբյանը հայտնեց, որ «Սի փի էս էներջի» ՍՊԸ-ի կողմից ընդամենը մեկ անգամ է ներմուծվել Եվրոպական բենզին ընդամենը 3 հազար տոննա: Տեսչական մարմինը որպես ապացույց արձանագրությանը կից կներկայացնի այդ ընկերությունների վերջին ամիսներին Եվրոպական երկրներից բենզինի ներմուծումների ցանկը:

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Տեսչական մարմնի 2023թ. տարեկան հաշվետվությանը, հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը, հավանություն տալ Տեսչական մարմնի 2023թ. 3-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը, հավանություն տալ Տեսչական մարմնի 2023թ. 4-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

Օրակարգի հարց՝ բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում:

Արմեն Կոտոյանը հայտնեց, որ Նարեկ Տերյանը պետք է ճշտեր, արդյոք Տեսչական մարմինը իր ունեցած սարքով կարող է իրականացնել բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն: Վահան Քերոբյանը հայտնեց, որ հավատարմագրման պարագայում կարող եք, սակայն Արմեն Կոտոյանը ասաց, որ այդ սարքը ենթակա չէ հավատարմարգրման, սակայն շուկայի մշակվող ռազմավարությունը՝ ելնելով Եվրոպական փորձից, հնարավորություն կտա առանց հավատարմագրման իրականցնել բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն: Արդյունքում որոշվեց հարցի լուծման համար գրավոր դիմում ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Խորհրդի նախագահը առաջարկեց չափման միջոցների ստուգաչափման սակագների, ստուգաչափման պարբերականության, ստուգաչափման գործընթացին վերաբերող օրակարգային հարցի քննարկումը տեղափոխել Խորհրդի հաջորդ նիստի օրակարգ:

Տեսչական մարմնի Խորհրդի հաջորդ հերթական նիստը անցկացնել 2024թ. փետրվարի 22-ին կամ 23-ին /լրացուցիչ կհստակեցվի/ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում՝ ք.Երևան Միհր Մկրտչյան 5 շենք հասցեում:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան

ստորագրություն